


ԳՐԱՎՈՐ

Институт  
Востоковедения  
Академии Наук  
СССР

# ՄԵՆՔՆԵԿ ԵՎՔ ԿԱՌՈՒՑՅՈՒՆԻՄ



891.995  
8-64

ԱՆԴՐԱՎԱՐ

2011-07

СА 586  
891.995  
Г-64

в. 06060

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՄԵՆՔ ԵԼ ԵՆՔ —  
— ԿԱՐՈՒՑՈՒՄ

(Հոկտեմբերի կենցել համար)



44-00402

ՍՊԻՏԵԼ 1933 թ.  
ԹԻԳԻՒԹԻՒ

28.06.2013

11237



## ՄԵՆՔ ԵԼ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ

I

Մանկապարտեզի պես ժպառուն եր այդ որվա արել:  
Այն տարբերությամբ միայն, վոր արել ժպառում եր  
լուս, ու միայն աչքերով, իսկ մանկապարտեզը՝ աղմու-  
կով, ձիչով ու խաղերով:

Դոներն ու պատուհանները բաց եյին. դրսի արել  
փողողել եր սենյակների ներսը ու պատերի վրա նկարներ  
եր անում իր շողերով:

Խմբավարները բակում խաղում եյին յերեխանների  
հետ, փորոնք փաթաթել եյին նրանց:

Բակում յերեաց մանկապարտեզի վարիչը, տարիքով  
մի կին, ժպիտը դեմքին:

- Բայիկներ, հիմա ներս, պարապենք:
- Մորաքնյալը...
- Մորաքնյալը...
- Մորաքնյալը...

Աղմկեցին ու վագեցին դեպի նա: Կպան վարիչին.  
Գրկեցին փեշերը, վոտքերը, ձեռքերը... ինչպես մեղու-  
ներն իրենց մոըը:

— Գնանք, գնանք, փոքրիկներս.  
Ու այդ ժամանակ Սրբուհին, մանկապարտեզի ծա-  
ռայողը, բաց արավ դուռը, վորի յետեկց ինչ վոր մեկը  
զանգահարում եր անհամբեր: Յերբ դուռը բացվեց՝ բոլորը  
անսան փողոցում կանգնած փոստի յերկծի սալլակը՝ բեռ-  
նը ված զանազան ձեի ու մեծության արկղներով: Արկղ-  
ները կապուտված եյին թոկերով ու վրաները գրված: Զան-



59400-66

զի կոճակի մոտ, բացված դռան առաջ կանգնած եղ փոռատարերը՝ մի այդպիսի արկղ ձեռքին:

— Դա մերն ե, — զիմեց վարիչը, ակնոցներն ուղղելով:



— Այո, մանկապարտեզինը, Մոսկվայից:

— Համա, լավ ե, եղ ինչ շուտ:

Յերեխաների զվարթ աղմուկը մի բոսի լոեց, ապա նորից ալիք ավագ՝

— Թող մենք տանենք...

— Թող մենք տանենք, մորաքույր, — թախանձում եցին նրանք:

Ու տանյակ զույգ թաթիկներ բոնեցին արկղն ու նրա կապած թելերը: Մինչև նա կսորազրելով փոստաթերի տետրակում արկղն ու յերեխաները շարժվեցին դեպի ներս:

— Տեսնում եք, ինչ շուտ ստացանք, — յետևերեց համակարգ, ասաց վարիչը, — զործիքներն են, ձեր հավաքածքառասուն ոռուլով:

— Վա, վա, զործիքները, զործիքները...

— Բաց անենք, մորաքույր ջան...

— Բաց կանենք հիմա, փոքրիկներս, բաց կանենք, բայց լով կլինի, վոր դուք դնաք ձեր սենյակները ու յերբ ամեն ինչ պատրաստ կլինի, ցույց կտանք ձեզ:

Խմբավարները հազիվ կարողացան փոքրիկ ու միջակ խմբակներին հեռացնել արկղից:

— Մենք մնանք, ովնենք արկղը բանալուն, մորաքույր, — խնդրեցին մեծերը:

— Լավ, դուք մնացեք, համաձայնեց վարիչը, միայն գնացեք մուրճն ու ունելիքը բերեք:

— Ինչու, մորաքույր, տանենք աշխատանքի սենյակը:

— Եղ ել ես լավ ասում, Մուշեղ Ջան, դե, տանենք:

Յեզ մի առանձին հպարտությամբ, վոր իրենք մեծ են մյուսներից, 7—8 տարեկան փոքրիկների խումբը, ընկեր նունեյի ու վարիչը հետ միասին արկղը տարան աշխատանքի սենյակը:

Աշխատանքի սենյակը ճոխ չեր սարքավորված, սակայն կային անհրաժեշտ մի շարք զործիքներ, վորոնցով կարող ելին սղոցել, ուսնդել, մեխել, ծակել և այլն: Յերկու հատ նոր ստացված տատաղձագործական դադարաները տեղափորված ելին իրար կողքի, վորոնց վրա դեռ չելին աշխատել:

— Ապա ունելիքը տվեք, Մուշիկ.

— Զե, դեռ կապերը քանդենք:

— Հա, Հրաչ, տուր դանակը:

Դանակն իսկույն չգտնվեց:

— Թուր ե դանակը. ինչու իր տեղը չի:

— Պահարանը տեսեք:

— Լավ, առ որանով կարիք:

Ու մինչև գանակը կպանելին, Արտիկը դուրսվ կտրեց թուկի հանգույցը և քանդեց: Մուրճն ու ունելիքը դրանից հետո սկսեցին գործել յեռանդով: Յերեխաները բոլորն ել

ուզում եյին մասնակցել այդ գործին: Ով ինչ առես ձեռքն եր առել ու թխկացնում եր արկղին:

— Սուրբկ, դու խանգարում ես, եղան չի կարելի:

— Բալիկներս, դեռ ես մի կողմի մեխերը պետք է հանել:

Եղ կողքերինը պետք չե, թող մնա, այ, եսպես: Համո, դու յել ես խանգարում, թող Միքուշը հանի մեխը:

— Այ, յես ել հանեցի, մորաքույր, — մի մեխ բարձրաց-ը անպայման ուզում եր ցույց տա փոքրիկ վանդին:



— Եղ իզուր ես հանել, վանիկ ջան, կարիք չկար:

Մնացածներդ մի քիչ հեռու կացեք, թողեք Միքուշն ու Արտիկն ես յերկու մեխն ել հանեն՝ են ժամանակ յերեսի տախտակը կվերցնենք:

Վերջապես:

Բանի զույդ հետաքրքիր աշքեր միանգամից ցատկեցին արկղի ներսը, յերե նրա խոռվը վեր կացավ աեղից: Մկղում թղթե փաթեթներից բացի ուրիշ բան չերեաց: Արկղի դատարկ տեղերն ել եյին խցված թղթերով: Փաթեթներից ազատելուց հետո միայն, յերեացին գործիքները: Ի՞նչ փոքրիկ, թեթև բաներ եյին. իսկի գործիքնե-

րի նման ել չեն: Համարյա յերկաթե մասեր չկան վրա-ները: Սրանցով ի՞նչ պետք է շինեն:

— Դա ինչի՞ համար ե:

— Ես ինչի համար ե...

— Սրանով ի՞նչ պետք է անենք...

Հարցեր, անթիվ հարցեր: Բայց բանն այն ե, վոր վարիչն ինքն ել չգիտե գեռ դրանցից յուրաքանչյուրի դերը: Ինչպես բացարի յերեխաներին: Հետո նկատեցին, վոր մի յերկու փայտիկների ծայրերին ինչ վոր նշտար-ներ են ամրացրած, կասես դանակի ծայրեր լինեն: Փայ-տե լծակի վրա մի շարք համաչափ ծակեր են արած ու մոտները № № դրած: Ուրեմն սրանցից ամեն մեկն իր նշանակությունն ունի: Մի ուրիշ տախտակի կենարոնում բեկու ե ամրացրած: Վորոշ մասեր շարժվում են հետ ու առաջ: Մի խոսքով շատ մանրամասնություններ, վորոնք կենարոնացրել են յերեխաների ու շաղբությունը ավելի, քան հարկավոր ե: Դրանք Գրի չեն կոյ ի գործիքներն են:

— Այս գործիքները թողնենք հիմա, փոքրիկներ. յես կծանոթանամ, թե սրանցով ինչպես են աշխատում, ու վաղը կբացատրեմ ձեզ. հիմա անցնենք մեր սենյակը և պարապենք:

— Եսոր վոնց աշխատենք, վոր չգիտենք, թե վորն ի՞նչի համար ե:

Յերեխաները մի բոպե մտածկուու գառան, հայացքներն անորոշ, ասես թե մի պատ բարձրացավ նրանց առաջ ու փակեց ճանապարհը:

— Նրանք զիտեն, նրանք, — պայթեց հանկարծ մի սուր ձայն լոռության միջից ու մեքենայուրեն մատը բար-ձրացրեց գեղի վեր:

Բոլորը նայեցին Մուշեղին.

Ո՞վքեր:

— Նրանք, մյուս մանկապարտեղը:

Բոլորի մտքների վրայից քողը բարձրացավ ու հիշեցին, վոր խոսքը վերեկի հարկում տեղափորված ոռուսկան մանկապարտեղի մասին ե:

— Քեզ մի ասեց, Մուշեղ:

— Անցյալ որը մեր բրիգադան նրանց մոտ եր, ցույց տվին նրանք իրենց աշխատանքները, մտանք աշխատանքի սենյակը...

— Այն, այն, յես ել եմ հիշում, — Մուշեղի խոսքը կարեց Անուշը, — յես ել հիշեցի, ես տեսակ դործիքներ կային նրանց մոտ:

— ...ես տեսակ դործիքներ տեսա նրանց մոտ, — շարունակեց խոսքը. Մուշեղը:

— Ճիշտ ե, ճիշտ ե, մորաքույր, Պետկան պատմում եր կոլեկտիվում, վոր իրենք գեղեցիկ բաներ են շինել նոր դործիքներով: Նրանք ել են Մուկվայից ստացել:

— Վոր եղած ե՝ Միքուշն ու Մուշեղը դնան:

Բարձրացեք վերև ու ընկեր վարիչին խնդրեցեք, վոր յեթե կարելի յե, մի յերկու հոգու ուղարկի, դան մեզ ցույց տան, թե ինչպես պետք ե աշխատենք Փրիչենկուի դործիքներով:

— Այն,

— Զեք մոռանալ, Գրիշենկոյի:

— Զե:

— Ապա, ասա

— Գրիշեն-կոյի:

— Լավ: Ռուսերեն կարող ես ասել բոլորը, ինչ վոր ստացի:

— Այն, այն, կասեմ:

— Եხս ել գնամ, յես ել ուսւերեն կարող եմ ասել:

— Չե, բավական են յերկու հոգին լուլիկս:

Մուշեղն առաջ ընկավ.

— Դե, գնանք, Սիրուշ:

Նըստ գուրու յեկան սենյակից գեղի պատշաճութիւն սանդուղքը՝ մնացած ընկերներին թողած անհամբերության ծովում:

— Դե, փոքրիկներ, հոգնեցիք: Ապա մի ուղիղ կանգնեք, տեսնում եք, մյուս խմբակներում յերգում են, մենք ել յերգենք:

Խմբական յերգը թարմացըց յերեխաներին ու ցրեց նրանց ծանր մտածմունքները:

— Հիմա շարքով, իմ յետեկից, — ասաց ընկեր Նունեն ու առաջ ընկավ: Վոտքի ու յերգի տակտերով գուրու յեկան նրանք բակ, ուր գետ ժպտում եր զարնան արել:

## II

Ավելի հետաքրքիր տեսարան սկսվեց այն ժամանակ, յերբ վերադարձան Մուշեղն ու Սիրուշը, նրանց հետ ել մյուս մանկապարտեղից ուղարկված բրիգադը՝ Վասյան, Ալյոշան ու Շուրան:

Խաղամիջոցը այս անգամ ավելի կարճ տևեց:

Դրանց տեսնելուն պես՝ յերեխաները թողին իրենց խաղն ու գրոհեցին գեղի դահլիճ: Բայց խմբավարները կանգնեցրին նրանց.

— Փոքրիկներ, մոռանում եք, վոր պետք ե շարք անդ նեք: Ապա մի կանգնեցեք:

Ամենից շուտ մեծերը կանգնեցին, վորովհետեւ շտապում ելին դործիքների մասին լսելու: Նրանց յետեկից վորո-մուր շարժվեցին մյուս յերկու խմբակները՝ միջակներն ու փոքրիկները:

Յերբ յերեք խումբն ել շարքով բոլորված ելին դահլիճում վարիչը ծափ տվավ մի անգամ, վոր լսեն ու հայտարարեց:

— Միջակ ու փոքրիկ խմբակներն իրենց սենյակները

կանան, իսկ մեծ խումբը՝ աշխատանոց։ Մեզ մոտ յեկած բրիգագը կբացարի, թե ինչպես պետք է աշխատենք նոր ստոցած գործիքներով։

— Մենք ել ենք ուզում տեսնել, — ասացին միջակները։

— Մենք ել ենք ուզում տեսնել, ընկել — ուժեղացրեն առաջինների բողոքը փոքրիկները։

— Յետո ել մենք ձեզ ցույց կտանք։

— Միասին ենք ուզում։

— Միասին չենք տեղափորվի, աշխատանքի սենյակը փոքր ե։

Մի թեթև լուսթյունից հետո՝

— Այստեղ դահլիճում կտեղափորվենք, — լսվեց մի փոքրիկ ու սուր ձայն։

— Այո, դահլիճում, — միացան մյուսների ձայները։

— Հօր, ինչպես անենք, — դարձավ վարիչը խմբավարներին, — յերեխանները բողոքն են ուզում։

— Բողոք եք ուզում միասին։

— Այո, — համազարկ տվալ դահլիճը։

— Ազմուկ կրաքարացնեք։

— Զենք բարձրացնի, — նորից թնդաց դահլիճը։

— Լավ, — յենթարկվեց յերեխանների վորոշմանը վարիչը։

— Դե, հանգիստ մնացեք մի տեսնենք։

Ապա մի այստեղ բերեք գործիքները։ Ընկեր Նունեն ու Աշխենը դահլիճ բերին գործիքները։

— Իսկա, օբյանите нам теперь, детьки, — դարձավ վարիչը փոքրիկների բրիգադին։

— Մի սեղան ե հարկավոր այստեղ, — կարգադրեց վասյան, գործնական մարդու գիրքով։

(Վասյայի ասածները վարիչն իսկույն թարգմանում եր յերեխանների համար)։

Ընկեր Աշխենը կողքի սենյակից մի սեղան առաջ քաշեց, Վասյան շտապեց գեղի նա, ձեռքով փորձեց սեղանի կայունությունը, հետո մի քանի ուրիշ սեղաններ փորձեց ու մինի վրա կանգ տուափ։ Կայուն եր։ — Սա բերեք։

— Յերկու հատ՝ մեխ ու մի մուրճ ել տվեք։ Շուրացահիքը եսալես, գործի զրավ ընկերոջը, գործիքներից մինչ սեղանի վրա հարմարեցնելուց հետո։ Բերած յերկու մեխով ամրացրեց նա գործիքը, վարը անշարժ կապանի մեջքին։ Դահլիճի մեջ կազմված յերեխանների զոտին մեքենայորեն սեղմանում ու նեղանում եր գեղի կենարոնը։ Բոլորն ուզում եյին տեսնել Վասյայի ամեն մի շարժումը ու լսել նրա խոսքերը։

— Բալիկներս, դուք խոսք տվիք ախր, ազմուկ չտնել։

Յերեխանները հետ գնացին, լայնացրին ողակը։ Բայց քիչ հետո նորից նեղացավ գոտին։ իրար հրմանում եյին, շշուկ եր բարձրանում, թեկ վոչ վոք նրանցից չեր ուզում խախտել իր տված խոստումը։ Հետաքրքիր եր, ինչ անեցին։

— Այ, ես բեեռը վոր կա, — շեշտեց Վասյան, — ես մյուս գործիքի համար եւ Սրա վրայի ծակերը պետք ե հազցնվեն բեեռին։ Այն ժամանակ գործիքը կպտտվի բեեռի շուրջը ու իր ծայրի դամակով կանոնավոր ու գեղեցիկ լայնաներ կտրի։ Շրջանները մենք կարող ենք սեծացնել ու փոքրացնել. արա համար նշանակված են թվանշաններ։ Այ, փորձենք։ բարակ տախտակ ունեք, կամ դիկու։

— Ունենք, բեր, նունե։

— Ահա, տեսեք. ես տախտակից յես հիմա անիկ կկտրեմ։ Շաղափ տվեք, տախտակը ծակեմ։

— Ունենք աշխատանոցում, — զիմեց վարիչը։

— Զեմ հիշում, գնամ տեսնեմ։

- Այս գործիքների հետ պետք եւ լինի, — մեջ մտավ  
պատճան:
- Նույնիսկ յերկու հատ, — ավելացրեց Ալյոշան:
- Չկար:
- Չի կարող պատահի:



Բայց մի քանի ըոսկելից հետո, արկդի մեջ գտան  
միշտ վասիայի ասած յերկու շաղափներն ել: Ծակեց նա  
տախտակը մի կետում ու հանգցրեց բևեռին: Նրա վրա-  
թիթ ել կտրող գործիքը:

— Բոնեցեք եսպես, Ալյոշա, Շուրա: Նրանք ըսնե-  
ցին, իսկ ինքն սկսեց շրջել կտրիչը տախտակի վրայուի:  
Մի ըոսկ չանցած, նա հանեց տախտակը, սղմեց մեջտեղը  
և դուրս ընկավ մի սիրուն, կանոնավոր ու մաքուր կտրո-  
չած անիվ:

— Վահ, — զարմացան բոլորը:

— Հիմա ուզում եք ավելի փոքր, կամ մեծը կտրեմ:  
Պործիքը հանեց բևեռից, հազցրեց մյուս անցքով, Պտտեց:  
ու ավելի մեծ անիվ կտրվեց: — Շատ գեղեցիկ բաներ կա-

րող եւ շինել ձեզանից ամեն մեկը սրանցով, առանց զբժ-  
վարության: Որինակ սրանք ավտոմոբիլի լավ անիմսեր են:  
բաժակների համար խուփ: Ես մյուսները, գորից հանել:  
Ենք անիմսերը՝ պատկերների համար շատ լավ շրջանակ-  
ներ:

Կարող ենք բաժակակալ շինել սրանից: Այդ գեղը ում  
մի շրջան կկտրենք բաժակի հաստությամբ: Ահա անեմ:  
— Ու կտրեց իսկույն:

— Մի այս չափի տախտակ ել վերցնենք մեջը չհա-  
նած, բաժակի հատակի համար:

Հավասար կարենք կողքերը, գոր քառակուսի գառնա:  
Սրա համար ես մյուս գործիքով պետք եւ կտրենք:

Նա վերցրեց մի յերրորդ գործիք, վորի տակսոդմվում  
եր ուղած ուղղությամբ տախտակը ու վրայով անշեղ  
շարժվում նույնպիսի մի դանակի:

— Ահա, մեկ, յերկու, մեկ, յերկու, ընը՝ պատրաստ ե:  
Կարեց իսկույն տախտակի մի կողքը, հետո՝ մյուսները:

— Հիմա, յեթե մենք չորս հատ թելի փոքրիկ կոճի-  
ներ ամրացնենք այս տախտակների անկյունների միջև  
կտանանք գեղեցիկ բաժակակար: — Ու բաժակը տեղավո-  
րելով նրանց մեջ ցույց տվավ Վասյան:

— Վահ, ինչ հեշտ ե, եղ հո մենք ել կշինենք:

— Կարող ենք փոքրիկ տուփեր շինել, ծաղկամաններ,  
արկդներ, սարյակների համար բներ: Մի խոսքով ինչ վոր  
ուղենաք: հարկավոր ե միայն տախտակ ու մեխ:

— Հիմա դուք յեկեք, փորձեցեք, — տուաջարկեց Վա-  
սյան փարպետի մեծահոգությամբ:

Մեկ մեկ մոտեցան յերեխաները, փորձեցին, նույն-  
պիսի հեշտությամբ կտրում ելին գործիքները այնպես  
ինչպես և Վասիայի ձեռքում: Ուրախացան, վոզեվորվե-  
ցին. խլպում ելին իրար ձեռքից, բայց տախտակն ու  
դիկտը հատան: Ժամშի արգեն 12 եր:

— ԴԵ, բավական ե յերեխիեք, —խոսեց վարիչը, —ել  
տախտակ չունենք մենք, Յեթե ուզում եք աշխատել սրան-  
ցով, տախտակ բերեք տանից.

— Կերենք, կերենք, —գոչեցին ամեն կողմից:

— Իսկ հիմա, շնորհակալություն հայտնեցեք բրիգա-  
դին, ու կարգով գնացեք ձեր սենյակները, նախաճաշելու:

— Նրանք ել դան մեզ հետնախաճաշելու, մորաքույր,  
նրանք ել դան:

— Հա, փոքրիկներս, լավ եք ասում, յես մոռացա,  
նրանց ել հուրասիրենք:

— Այս, հյուրասիրենք, նրանք մեր հյուրերն են:

— Փօքրիկ ընկերներ, —գարձավ վարիչը բրիգադին,  
մենք շնորհակալ ենք, վոր այդքան շատ բան ցույց  
տվիք մեզ այսոր: Մի որ ել մերոնք կվան ձեզ մոտ, պատ-  
մելու իրենց տշխատանքների մասին: Սրանք ել շատ ու-  
րիշ տեսակի աշխատանքներ են կատարում: Իսկ հիմա  
խնդրում են ձեզ մեր յերեխաները, վոր իրանց հետ մնաք  
նախաճաշելու:

Առանձնապես ուրախ եյին Մուշեղը, Սիրուշն ու մյուս  
հոկտեմբերիկները, վորոնք վասյայի, Ալյոշայի և Շուրա-  
յի հետ միենույն կոլեկտիվումն եյին:

Մանկապարտեզից այդ որը տուն դառնալիո՞ւ փոք-  
րիկներից ամեն մեկը մի բան եր մտածում միայն, թե  
մյուս որը ինչքան զիկտ ու մեխ զետք երերի հետը, վոր  
նոր գործիքներով նոր բաներ շինի ինքը:

## ԴՊՐՈՑԻՑ - ԳՈՐԾԱՐԱՆ

Հպարտ յերթով

Մենք ամեն որ

Գործարան ենք

Դիմում հերթով:

Պայման ենք գրել

Գործարանի հետ

Ու դրել ժամկետ,

Վոր 50 հոգու

Դարձնենք գրագետ.

Թերթը կազմենք

Պատի

Գործարանում,

Պիտի

Ծաղրենք, նկարենք

Նրանում

Ծույլին ու վատին.

Ով ուշանա,

Ով կեղծի, խարի,

Ով խմի-հարբի,

Տեմպից հետ մնա՝

Հարվածենք նրան

Անխնա:

Յեխից-ցեխ ենք անցնում

Որերի ընթացքում.

Ու մի նոր զգացում

Ունենք հպարտ,

Վար մենք բանվոր ենք,  
Ու պետքական մարդ.  
Վոր մենք ել ենք

Սոցիալիզմ  
Կառուցում.

Յեկ ինչ չենք տեսել դպրոցում,  
Հիմի՝

Այսուեղ ենք անցնում:

Գործարանն ել  
Իր հերթին  
Տվել ե խոստում,  
Վոր կողնի մեզ,  
Կապքի

Մեր արհեստանոցում  
Ամեն ինչ կարգին:  
Բայց անցնում են որերը.  
Գերջին որն ե ժամկետի:  
Մենք կատարել ենք բոլորը  
Իսկ այդ որը  
Նրանց որն ե հանգստի:

Միթե մոռացան նրանք  
Պայմանն ու խոստումը  
Դպրոցին...  
Կամ ձեզք տիմն...

Լավում ե ձայնը տնրոցի.  
Գուռում ե

Ավտոն ծանր.

Բացվում ե զուոր դպրոցի.

Բարձած բերում ե  
Մեծ ու մանր

Հաղար գործիք,  
Ու,

Հարվածայիններին  
Գործի:

— Այսոր մեր որին հանգստի,  
Յեկել ենք մենք,  
Ասին, —

Սարքավորենք  
Արհեստանոցը ձեր.

Ու գործարանից  
Բերել ենք  
Այս բոլորը՝ նվեր:

Գործը յեռաց հանկարծ  
Աշխատանոցում.

Գորը չափում ե, կարում,  
Գորը՝ խարտոցում:

Մոտոր, օղմիչ, դագգան:

Տեղերն ամբացան,  
Կաշվե փոկը ուստի՝

Անիվը գարձավ:  
Լարված աշխատանք ե

Մինչեւ ուշ գիշեր —

Սարքած պատրաստ ե  
Արհեստանոցը մեր:

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



## ՓՈՔՐԻԿ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ

Ուհանուն գործ ունենանելու «Կարմիր կոլխոզ»-ի մանկապարտեզում, վոր իմանաք: Որերն եր, կասես դիտամբ, վազում են իրար յետեից, ժամկետը մոտենում է արագ—հասցնելու յեն, թե չե: Տեսնես վոր բրիգադն և ժամկետերից շուտ վերջացնելու... Մրցանակը տանելու միտքը անհանգստացնում է աշխույժ ու ժիր փոքրիկներին: Նրանք զրժվըժում են, զբաղված, գործնական ու մեծորեն լուրջ:

- Եղ մուրճն ինձ տուր մի, Նազիկ:
- Սղոցը հրեն, Զարիկ...
- Առ բահը, Աշոտ:
- Սպասիր, կամորջը չփչացնես...
- Պահիր եսպես, մեխում եմ:
- Կարելի յե եսպես, ընկ. Սիրուշ:


Իսկ ընկեր Սիրուշը, վոր նույնպես զբաղված է ու չի ջոկվում նրանցից, մի խմբից մյուսին և անցնում, նրանց պես լուրջ, ընկերական, հավանություն ու խօրհուրդներ տալիս նրանց կատարելիք գործին:

Յեզինչ լավ ե, վոր աշխատանքն եսպես լավ եանցնում ու հետաքրքիր. Թե չե են ինչ եր սկզբում. չեր իմանում ինչ անի ընկ. Սիրուշը, ինչնվ զբաղեցնի յերեխաներին: Զեյին լսում: Աղմկում եյին: Նրա խրատներն ու բարկանալն ել ձանձրացնում եյին փոքրիկներին, ու դուրս եր գալիս, վոր նրանք անկարգ են:

Յեթե այդպես շարունակեր, գուցե Սիրուշն ինքն ել ձանձրանար իր գործից, կամ համոզվեր, վոր ինքը չի կարող լավ մանկապարտեզուհի լինել ու թողներ, հեռանար

նորից դեպի քաղաք: Բայց մի հանգամանք փոխեց գործի պատկերը:

Մանկապարտեզը բացվել եր կոլխոզնիկների մանուկների համար: Նախաձեռնությունը Հոկտեմբերյան տոներին քաղաքից յեկած շեֆ գործարանի ընկերներինն եր,



Գործնք խոստացել եյին ուղարկել քաղաքից, ինչ վոր հարկավոր է: Յեվ յերբ այստեղ յեկավ ընկ. Սիրուշը, վաչթե «հարկավոր ամեն ինչը», այլ համարյա թե մանկապարտեզի համար վաշինչ չկար դեռ ևս: Բայց ընկ. Սիրուշի յետեից, «կարմիր կոլխոզ»-ի համար մի քանի կապկապած արկլողներ ել յեկան: Դրանք մանկապարտեզի համար եյին: Միշին, պատկերազարդ գրքույկներ, խորանարդիկներ, պատկերներ, գունավոր մատիտներ, ներկեր ու տետրակներ և ամեն աեսակի գործիքներ՝ փոքրիկների համար:

Ամենից շատ յերեխաներին դուր յեկավ գործարանի գունավոր պատկերը. շենքը՝ մեծ, պատուհաններն ենքան շատ, ծխնելույզը բարձր-բարձր, բա բանվորները... ինչ քան շատ են...

Հարցերն սկսեցին թափվել մեկը մյուսի յետեկից:

— Եղ գործարանը քանի՞ անգամ բարձր կինի՞ մեր առանից, ընկեր Սիրուշ:



— Քանի մարդ եւ աշխատում ենտեղ. գուք յեղել եք  
եղ գործարանում. ինչեր են շինում, սրանք ինչու համար  
են, ընկ. Սիրուշ... ընկ. Սիրուշ...

Յեզ ամենից շատ հետաքրքրեց նրանց այն փոքրիկ  
վագոնները, վորոնք տեղափորված եյին գործարանի յերկու  
շենքերը իրար միացնող յերկաթաղծերի վրա:

— Պահ, սրան տես մեկ, սրան, Արամ ջան...

— Ու չափազանց հաճույք եր պատճառում այն հանգա-  
մանքը, վոր վագոնները զլորվում եյին մարդկանցույժով:

— Դուք տեսել եք, ընկեր Սիրուշ, եղ վագոնները,  
— ատաերորդ տնօպամ հարցրին նրանք ուրախությունից:

Յեզ յերբ ընկեր Սիրուշն ասաց, վոր մի անզամ ել  
ձեզ կտանեմ ցույց տալու՝ քիչ եր մնում, թե սրտները  
ճաքի անհամբերությունից:

— Վա, վա, — ծափ տվին ուրախությունից: Բայց գե,  
դուրսը ցեխ եր, ձյուն, ցուրտ ձմեռ:

— Մենք մայիսին կդնանք քաղաք ու կտևնենք այդ  
գործարանը:

— Զե, չե, մայիսը հեռու յե, շուտենք ուզում տես-  
նել, շնոր, շնոր...

Ու փոքրիկների անհամբերությունը Սիրուշի մեջ մի  
լավ միտք առաջ բերավ:

— Փոքրիկներ, զե վոր շուտ եք ուզում տեսնել...

— Շնոր ենք ուզում, շնոր ենք ուզում, — խլեցին  
բերնից խոսքը:

...մենք կարող ենք շուտ տեսնել, յեթե այսպի-  
սի մի բռն անենք...

— Ի՞նչ, — բերանարաց 21 փոքրիկները սպասում եյին,  
թե ընկեր Սիրուշի բերանից ինչ դուրս կգա, վոր նրանք  
գործարանը շուտ տեսնեն:

...այն, վոր մենք կարող ենք այդ գործարանը այս-  
տեղ շինել...

Քսանը մեկ զույգ ուրախ աչքերը լայնացան, բերան-  
ները կամաց բացվեցին:

— Զարդանում եք. չենք կարող շինել. տեսնում եք,  
ամեն աեսակի գործիքներ ունենք. միթե ես պատկերնե-  
րին նայելով չենք կարող սրա նման փոքրիկ գործարան  
շինել...

— Կարող ենք, — անվատահ ասաց մինը:

— Կարող ենք, — վատահ խառնվեցին և մյուսների ձայ-  
ները:

— Սպասեցեք, աեսնենք կարող ենք, թե չե:

— Կարող ենք, — համազարկ տվին միաձայն:

— Մեզ հարկավոր կլինի տախտակներ, փայտիկներ,  
մեխ, յերկաթալար...

— Յես տախտակ կբերեմ, ընկ. Սիրուշ:

— Յես ել մեր տանից մեխ կբերեմ:

— Սպասեք. եղ լավ եք ասում: Ել մի ինչ կարող ե  
բերել:

— Յես:

— Յես:

— Յես ել տախտակ կբերեմ:

— Յես ել մեխ կբերեմ:

— Յերկաթալար ե հարկավոր:

Յերեխաները նայեցին իրար յերեսի:

— Բենոն կարող ե:

— Հայրիկիս կասեմ, — համաձայնեց Բենոն:


— Լավ. եղ ել զու, Բենոն: Ինչ ել պակասի, կճա-  
րենք կոլխոզից, կամ ինքներս կշինենք: Հիմա մի ուրիշ  
քանի հոգի յեք ուզում աշխատել զրա վրա:

Բոլոր մատները բարձրացան իրենց սուր ձայների հետ:

— Դե վոր բոլորդ, են ժամանակ՝ եղ մեկը քիչ ե.  
բոլոր իրար հետ աշխատել չենք կարող, կիսանգարենք  
մեկ. մեկու:

- Յերկու հատ շինենք, — գոչեց մի ուղիշ սուր ձայն»
  - Չե, յերկու հատն ինչ կանենք,
  - Ուրիշը բան շինենք:
  - Ի՞նչ:
  - Մեր կողինողը»

Նորից... լավ միտք տվին Գորդիկ խորհրդատուներն ընկեր Սիբուշին, և շատ լավ միտք։ Նա մտահոգված եր, թե ինչպես պոլիտեխնիկ բնույթ տա զբաղմունքներին։ Ինչ-



պես բազմակողմանի աշխատանքն ու ուսումը հյուսի իւրաք հետև Քաղաքումն այս բոլորը ավելի հեշտ ե. գործարաններ կան ամեն տեսակի. կարող են կապվել նրանց հետ, գնալ, տեսնել ու աշխատել: Խսկ այստեղ, մի դյուզում, վորտեղ մոտիկ գործարան չկա, յեղանակը ցուրա, ձամբեքը ձյուն ու ցեխ, — ուր կարող են գնալ: Ահա, այս պայմաններում ուղղակի փրկությունն եր ընկեր Սիրուշի համար այդ միտքը:

— Հայ, փոքրիկներս, Սարոն լավ ասաց. Մինենք մեեն ել մեր գյուղի կոլխոզը — «Կարմիր կոլխոզը», տները, բանջարաննոցը...

- Նոր շինած գոմը, — ձայն տվին:  
— Մեր դպրոցը, — ասաց մի ուրիշ ձայն:  
— Ճաշարանը...  
— Զաղացը...

Յեզ կարմիլեց աշխատանքի մի գեղեցիկ ու հետաքրքիր ծըազիր մանկազարտեղի համար:

Այլեւ ընկեր Սիրուշի զրույցն ու կարդացած մի պատմովյունը, աշխատանքի ընդմիջումին՝ ձանձրալի չեր լինում նրանց համար: Բայց նրանք միասին համոզվեցին, վոր յերկու խումբն ել մեծ կլինեն. ու կխանգարեն իրար աշխատանքի ժամանակ: Յեզ վորոշեցին յերեք խմբի քառանկյուղ: Յերրորդ խմբի աշխատանքի համար վերացըըին բամբակի մի գաշտ, փորի միջով ջրանցք եր անցնում, և առանձնապես ուրախ ելին, վոր կամուրջ պետք



և շինեն պրայով, արտկտորով պետք է վարելին հողը:

Հետեւալ որը աշխատանքի պլանը կազմեցին։ Բաժանվեցին յերեք բրիգադի, ամեն մեկի մեջ՝ Երիգաղիք։ Էնկեր Սիրուշը բացատրում եր նրանց, ոգնում ու ցուցաւնքներ տալիս։ Վորոշեցին վերջացնել այդ աշխատանքը մինչև հունվարի 22-ը։ Այդ որը շեփ դործարանից պետք է ընկերներ գային։ Իսկ յեթե չվերջացնեն։ Հայտարարվեց մրցում։ Ով ժամկետից վաղ վերջացնի՝ նա տանում է մրցությանը։ Նրանց անունը կինի կարմիր տախտակին։

Ու հիմա յեթե մտնենք «Կարմիր կոլխոզի» մանկապարտեզը, վարաեղ հավաքված են կոլխոզնիկների 5—7

տարեկան փոքրիկները՝ կաևսնեք, վոր ընկեր Սիրուշը շատ  
զգույշ ու վոտքերի ծայրերի վրա յե մոտենում մի բրի-  
գաղից դեպի մյուսը, վոր չխանգարի: Այստեղ իրար խառ-  
նըված, մտազրաղ, լուրջ ու գործնական աշխատառմ են  
յերեք շրջանակների շուրջը, վորոնց մեջ գետեղված են  
գործարանի, կոլխոզի և բամբակաղացակի մողենները: Մուր-  
ճը, սղոցը, ուսնղան ու բահը մի ձեռքից մյուսն են անց-  
նում: Չափում են, կտրում, սղոցում, փորում, շինում—  
մի խոսքով կառուցում են, ինչպես վոր գիտեն, ինչպես  
բացատրում ե ընկ. Սիրուշը: Նրանք լարված մրցման մեջ  
են և ամեն մեկն ուզում ե, վոր բրիգադի մեջ ինքն աչ-  
քի ընկնի: Աշխատանքի դադարից հետո լավում ե նրանց  
ուրախ յերգն ու քայլը, նրանց պարն ու մարզանքը:

Մինչեւ 22-ը գեռ բավական ժամանակ կա, բայց ար-  
ջանակները հետաքրքիր են դարձել ու ավելի յեն վողես-  
րում փոքրիկ կառուցողներին—այստեղ շենքեր են յերեսում,  
ցանկապատեր, մարզիկ. հատակը ծածկված է հողով ու  
ավաղով, շենքերի մասերը ներկվում են, բնական գույն  
տալու՝ քարին, փայտին... Մարդիկ գունավոր կավից են  
ծեփված: Գործարանի բակում վագններ են յերեսում գր-  
ծերի վրա: Զրանցքի կամուրջը գեռ կիսատ ե, բայց ներ-  
կում են... Մի բան պակասում ե. գա նրանց համբերու-  
թյունն ե: Շատ են շտապում. ուզում են իմանալ, թե ով  
է տանելու մրցանակը—փոքրիկ կարմիր գրոշակը, Լենինի  
պատկերը վրան: Ուզում են իմանալ, թե բրիգադիրներից  
վորի անունն ե գրվելու պատի թերթում: Տեսնենք:

## ԽԱՂ—ԱՇԽԱՏԱՆՔ

### 1.


Մի տեսեք թե մանկանոցում  
ի՞նչ աղմուկ ե, իրարանցում.  
Հավաքվել են ընկերները.  
Չենք լսվում ե փողոցում:

Վանին ե,  
Զանին ե,  
Կարոն,  
Մարոն,  
Նախշուն չեղան,  
Գանգուր Յեղան,

Ելի՛ քանիսը սրանց պես—  
Միտո ել չի, թե թվեմ ձեզ...  
Հավաքվել են, սարքել հանդես:  
Մինը եստեղ մի անկյունում,  
Մի խումբ հեռու՝ մի տեղ բռնած—  
իրանց համար զործ են շինում  
Վորն աղմուկով, վորը՝ լուծ:


Ու ժխորում  
Աղմուկի տակ  
Չեն խանգարում  
Իրար նրանք,  
Դեմքները լուրջ, են մանկական,  
Կտրել ե վարդ.  
Շարժումները՝ խիստ համարձակ,  
Ժիր ու զվարիթ:

Մի տեղ քաղաք են շինում, տես  
Փողոցները՝ յերկար ու ձիգ.  
Կառք ու ձիեր՝ ինչքան ուզես,  
Վողջը թղթից — տուն ու մարդիկ.



Անկյուններում փողոցների  
Բանվորական կոռալերատիվ.  
Հազար տեսակ բաներով լի՛  
Յուցանակները ճակատին:  
Գնորդները մտնում, յելնում,  
Ել գյուղացի, քաղաքացի—  
Վորը տանում, վորը՝ բերում,  
Վոնց վոր ճանձը մեղվանոցի:  
Ելի հեռու եղ տներից,  
Ուրիշ տների յետեռում,  
Գործարանի յերկար ու ցից  
Ծխնելույզներն են յերեռում:  
Եսպես հազար ու մի բաներ,

Ինչ պատահել,  
Զեռքներն ընկել՝



Բերել են ու կողքին տնկել...

Բա են կողմը նայեցեք մին,  
Թե ինչ շեշտ ե առել դեմքին  
Չարաձճի մեր վիգուշը:  
Շուրջը խմբած իր թայ-թուշը:  
Ինքը նրանց չափ ե տալիս,  
Հոկտեմբերիկ են՝ գնում, գալիս  
Մի-մի կարմիր կտոր վզին՝  
Թափով քայլում են միասին...  
Յեվ ձայները իրար խառնած,  
Լրջությունով աշքները լի,  
Թաթիկները անկարգ բռնած  
Են մանկական լեզվով թլիկ—  
Միշտ վողջույնի կոչին զգաստ,  
Յերբ լսում են՝ «յեղիր պատրաստ»:  
Զայն են տալիս  
«Մենք միստ պատրաստ»:  
Եսպես աշխույժ իրարանցում—  
Մեր վանիկանց մանկանոցում:  
Խաղ են տնում ընկերներով  
Զենը լսվում ե փողոցում:

Կարմրաթշիկ  
Փոքրիկ Արան,  
Տեսեք, սարքել ե  
Գործարան:  
Կարմիր թղթից  
Շինել հնոց,  
Կրծքին մի լաթ,  
Թե սա՝ գոզնոց:



Փուքու ծալ-ծալ  
Մի թղթե պարկ.  
Սուր ե քսել  
Յերեսին ալ—  
Զարկում, հա զարկ...  
Շըշտ մի դույլ  
Արել զընդան,  
Մի մատիտ ել  
Բռնել վըրան—  
Ծեծում, շինում  
Հազար մի բան.  
Մուրճ ու կացին,  
Խոփ ու գութան...

Իսկ Սուրիկը, աեւ  
Հատակին —  
Մերկ ծնկները  
Ծալած տակին —  
Վժնց ե բացել  
Հրապարակ —  
(Լուրջ գործի յե  
Ծանր ու բարակ) —  
Ու մտուցած  
Շուրջն աղաղակ  
Պատրաստում ե  
Մի լավ քաղաք:  
Լուցկիներից

Գիծ ե շարել,  
Տուփիկները՝  
Վագոն արել.  
Մեջը լցըել  
Լորու հատիկ,

Յերկհարկանի,  
Յևհարկանի —  
Փայտիկներից  
Ինքն ե շինել ...  
Յեվ եղ տեղից



Թե, թող լինեն  
Սրանք մարդիկ:  
Տուփի յետե,  
Տուփի առաջ  
Համազգեստով  
Սև ու կանաչ  
Կազըրել ե  
Յերկու պատկեր,  
Թե՞ կոնդուկուկ տորն,  
Վատմանն, ես ել:  
Դրանց շուրջը  
Մեծ մեծ աներ,

Բանի, քանի  
Փողոցներն են  
Ուղիղ ու ծուռ  
Հսկիզը առնում  
Ու գուրս ձգվում:  
Բանի փողոց՝  
Մարդկանցով լի՝  
Բշտապում են  
Չգիտես ուր...  
Վոտքով, կառքով  
Դնամ, գալի...

# ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

I

Յեղանակը գուրսն այնքան հրապուրիչ ու գեղեցիկ էր, վոր կոլեկտիվի ակումբում փոքրիկներին ներսը պահել չեր լինում։ Ասես թե, գարունը, կանաչ բնությունը քաշում եր յերեխաների փեշերից, թե դուրս յեկեք, ներսը պարապելը հիմա ձանձրալի յե։ Այս տրամադրությունն եր պատճառը, վոր հոկտեմբերիկները շուտ-շուտ դիմում ելին կոլվարին։

— Ընկեր Բաբկեն, բա յե՞րբ պետք ե զբոսանքի գնանք դեպի գաշտ, դեպի անտառ։

Պարապմունքների պլանում, իսկամես վոր նշանակված եր այդպիսի մի կետ՝ մայիս ամսին։

Յեվ սրանից հետո զարմարալի չեր, վոր ուրախության մի ոռումք պայթեց յերեխաների մեջ, յերբ կոլվարը հայտնեց մի որ, թե վաղը մենք պետք ե անտառ գնանք զբոսանքի։

— Ընկերներ, յես արդեն ասել եմ ձեզ, թե ինչ նըպատակով ենք գնում և ինչ պետք ե անենք այնտեղ, — հայտարարեց նա։

— Թիթեռներ, միջատներ ժողովելու։

— Միայն։

— Ծաղիկներ ժողովելու։

— Տերեներ ժողովելու։

— Այս Ռւբեմ, ինչ ե հարկավոր մեզ։

— Թիթեռ բռնելու ցանց։

— Յես ձեռքով ել կարող եմ բանել, ընկեր Բաբկեն։

— Զեռքով դժվար ե։  
— Յես գլխարկով եմ բռնում։  
— Զե, չե, պարզ ե, վոր պետք ե ցանց անենանք,

թե չե...

Այս, այս, ցանցը լավ ե։

Զեզանից ով ունի ցանց։

Յերկու ձեռք բարձրացավ։

Թիչ ե յերկումը։

Իմի կոթը կոտրած ե։

Քոնի կոթն ել կոտրած ե, Սուրեն, Լավ չեղավ։

Պետք ե մի քանի հատ ցանց պատրաստենք։

Յես կը ինեմ, ընկեր Բաբկեն, — միջամտեց Բագրատը։

— Հա, դժվար բան չի նրա շինելը։ Յերկաթալարից կամ ծառի թարմ ճյուղերից շրջան պետք ե շինել ու ամրացնել մի յերկար փայտի ծայրի։ Այդ շրջանի վրա յել բարակ կտորից մի առարկակ կարել, ուրիշ վոշնչ։

— Այս, այս, կարող ենք, կարող ենք...

— Մեզ հարկավոր են ելի փոքրիկ առափեր, բռնած միջատներն ու ծաղիկները մեջները տեղավորելու համար...

— Վոր չջարդվեն մինչեւ բերելը, չ։

— Այս, վոր չջարդվեն։

— Կբերենք, կբերենք։

— Կհավարկեք ժամը 10-ին։ Կվերցնեք հետներդ միմի շիշ, ջրի համար ու նախաճաշ։ Առանձին կապոցի կամ տոպպակի մեջ հարմարեցրեք, վոր ուսներդ պցեք։

— Գնդակ կարելի յե վերցնել։

— Իհարկե կարելի յե։ Կվերցնենք կոլեկտիվից գընդակ ել։

— Յես ել ունեմ. իմը կբերեմ։

— Լավ։

— Ո՞վեր են լինելու ելի մեզ հետ, — հարցրեց Արմենիկը։

— Յես, ողակավարները, պիոներներից մի քանի հոգի և գուցե կոմերիտ ընկեր Արշոն:

— Վա, վա ընկեր Արշոն ել եզակու, ընկեր Արշոն...  
— Ընկեր Բարեկն, ասացեք, մանդալինան ել բերի

հետք:

— Անալայման կրերի, վոր նվագի ձեզ համար:  
— Իսկ ուսուցիչներից:  
— Դեռ չփառեմ, բայց ճիշտ վոր, լավ կլինի, վոր դան:  
— Խնդրենք ընկեր նկարչությանը, Լևոնին. նա մեզ

կուկարի յել, ապարատ ունի:

— Կինդրենք, լավ:  
— Ընկեր Մանուշին ել խնդրենք, նա մեզ կպատմի  
միջանաների ու ծաղիկների մասին:  
— Ընկեր Աստղիկին ել խնդրենք, —խոսեց Սեղիկը,  
իրենց Վարժուհու մասին:

— Շատ լավ: Ուրեմն, ընկերներ, վորոշում ենք, վոր  
մեզ հետ զրուանքի դան ուսուցիչներից՝ ընկեր Լևոնը,  
ընկ. Մանուշին ու ընկեր Աստղիկը:

— Ա-յա, —մեխեցին միաձայն:  
— Ում ենք հանձնարարում մեր վորոշումը նրանց  
հայտնելու:

— Ընկեր Սուրբիկին...  
— Ընկեր Աշխենին...  
— Ընկեր Նունիկին: Զանազան կողմերից լուսեց  
փոքրիկների առաջարկությունները:  
— Համաձայն եք բոլոր:

— Համաձայն ենք, —պատասխանեցին նույնպիսի հա-  
մազարկով, ինչպես առաջ:  
— Ուրեմն մեր վաղվա ծրագիրը պարզ եւ բոլորի հա-  
մար:

Թող ամեն մեկը հիշի իր անելիքը:

Այս խորհրդակցությունից հետո յերեխոներն այն-  
պես տուն հասան, վոր ուրախությունից նըանց թվաց,  
թե վահ թե իրանց վոաքերով են յեկել, այլ մեկը թոցը-  
րել բերել է տուն: Այդ գիշերն ել անհամեմատ յերկար  
տևեց, քան թե նախորդ գիշերները. իսկ առավոտյան՝ բո-  
լորի տներում համարյա մինույն պատկերն եր: Յերե-  
խաները շատպելուց զգայնանում եյին, վոր կուշանան, իսկ  
Խնդրենք ընկեր նրանց պաշարը և հան-  
գրասացնում գուրգուրմանը:

Չես ուշանա, Սուրբիկ ջան, մի վախի.

Դեռ վաղ ե, Սաթիկ ջան...

— Ժամը 8-ը չկա զեռ, բալիկս... և այն և այն:  
Բայց և այսպէս ամեն մեկին թվում եր, թե ինքն  
անպատճառ ուշացել ե:

Ու վերջն այսպիս զուրս յեկավ, վոր բոլորն ել շատ  
վազ եյին յեկել և պետք եւ բավական սպասեյին կոլվա-  
րին ու մյուս մեծ ընկերների գալուն:

Ճիշտ ժամը 10-ին յերեաց կոլվար Բաբեկնը: Ամբողջ  
հոկտեմբերիկների խումբն ուրախ ազմուկը դիմավորեց  
նրանց: Քվչ հետո, ավելի մեծ աղմուկ բարձրացավ, յերբ  
յերեացին ընկեր Լևոնն իր լուսանկարչական ապարատով  
ու ընկեր Մանուշը: Ընկեր աստղիկը չեր կարողացել գալ,  
վորովհետև գպրցում ուրիշ պարապմունք ուներ: Իսկ  
ընկեր Արշոնին ընդառաջ վակեցին բոլորը, յերբ բակի գըռ-  
նեց ներկ մտավ նայ իր մանդալինով: Այս անգամ ուրախ  
աղաղակների հետ յերեխաները ծափ ել տվին:

III

Յերբ կոլեկտիվի բակում թմբուկը վորոտաց թմբե-  
կավայտերի վարժ կարկտոցից, հոկտեմբերիկների խումբը  
մեծերի լրջությամբ բարձրացրեց ու համաշափ գետին  
զարկեց ձախ վոտը: Այսուհետև իրար խառնվեցին աջն ու  
զարկեց ձախ վոտը: Այսուհետև իրար խառնվեցին աջն ու



լում եյին հպարտ, գվարթ ուներքին բավականությամբ։ Այս բավականությունը այն զգացմունքն էր, վորիրենք և ոկտեմբերի կեն։ Վորիրենք ել են մասնակցում սոցկառուցմանը։ Այս Յեղնանք այս գիտակցում եյին շատ լուրջ։

Հոկտեմբերի կերի շարանը փոքրիկ քաղաքի ծղուումուռ փողոցներում գալարներ եր անում ոձի պոչի պես։ Շները հաջում եյին նրանց ազմուկի վրա։

Այս ու այն կողմից մոտ վազող յերեխաները, վոր քայլում եյին նրանց շարքի կողքերից ու յետից, նախանձով եյին նայում ու իրենք ել ուղում, այդ շարքերում քայլել։ Նրանց բորիկ վոտքերն ելեր համաշտիք խփում գետին՝ թմբուկի դարկերի հետ։

— Հեռու մեզանից,

— վրա պրծավ Միկիչը նրանցից մեկին։

— Ի՞նչ եք մեզ հետ խառնվում, — բարկացած դոչեց Արամը և ուզեց վոտքով հարվածել իր կողքից քայլող մի յերեխայի։

— Արամ, նկատեց կոլվարը։

— Բա ինչ, ընկեր Բարկեն, նրանք հո հոկտեմբերիկ

շնն, ինչ իրավունք ունեն մեզ հետ քայլելու։

— Գու մոռանում ես, Արամ, վոր հոկտեմբերիկները պետք ե իրենց շարքերը գրավեն անկազմակերպ յերեխաներին ևս, վոր նրանք ել դաստիարակվեն ձեզ պես։

Ու հետո Բարկենը դարձավ իրենց հետեւող յերեխաներին։

— Ուզում եք զալ մեզ հետ, փոքրիկներ։

— Հա, ուզում ենք, մենք ել կդանք։ — Դե, կանգնեցեք զույգ-զույգ։

Սիրտ առան նրանք ու մոտեցան։

— Մինչև քաղաքից դուրս գալը նրանց թիվը տասից անցավ ու քայլող զույգերի շարանն ավելի յերկարեց։

#### IV

Քաղաքից դուրս բնությունն սկսվեց։ Կանաչ, ծաղկիկներ, թոշուններ...

— Ազատ յերթ, — հրահանգեց կոլվարը։

Ու թելը կտովեց հուլունքի շարանի. ուրախ ճիշերով իրար խառնվեցին փոքրիկների ձգված զույգերը։

— Տեսնում եք, են կանաչ անտառը. այ, այստեղ պետք ե գնանք մենք, — շարունակեց ընկեր Բարկենը։ Իսկ մինչև այստեղ հասնելը՝ կանցնենք այս բաց դաշտով։

Վմբ բըիգաղն ե ծաղիկներ ժողովելու։

— Մենք, — ասաց Սօնիկը, — մեր ողակին և հանձնաբարիած։

— Շատ տեսակ ծաղիկների կհանդիպենք այս դաշտում։ Իսկ գնուք, Գրիգոր։

— Մենք թիթեռներ ենք վորսալու։

— Հա, ուրեմն ամենադժվար գործը ձերն ե, ծաղիկների վրա շատ թիթեռներ ել կինես այստեղ։

— Դնուք։

— Մենք զանազան ձեի տերեններ պետք ե ժողովենք։

— Եղ ել անտառումը կանեք:  
Ու փոքրիկները, գառների նման ցրվեցին կանաչի  
մեջ, խառնվեցին ծաղիկների հետ:

  
Հանկարծ լսվեց Նունիկի սուր ձայնը.  
— Վայ, տեսեք մի տեսեք, ես ինչ  
եմ դտել, ընկ. Բարեկն:

Ու ջուխտ ափ երն իբար սղմած աշքը  
վրացից չհեռացնելով շարժեց դեպի կոլ-  
վարը:

Մյուսները մոտ վաղեցին նրան:

— Վա, ես  
ինչ եթերին,  
տեսեք մի ինչ  
լավին, ինչ դե-  
ղեցիկն... կար-  
միր, սե պու-  
տերով...

— Ո՞ւր ե,  
ուր ե:

— Ա բ ա,  
արա, — ամեն

կողմից յերկարացըին վզները, վոր տեսնեն:

